Հավելված
Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի
հուլիսի 30-ի թիվ 121-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի հունիսի 30-ի թիվ 104-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Կրթության մասին» ՀՀ օրենք, «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ. թիվ 5-Ն «Բյուջետային հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման, ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. թիվ 254-Ն հրաման և այլն
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի մարտի 31-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020 թվականի հունիսի 8-ից մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն և տարեկան կատարման հաշվեքննութայն ուղեցույց»-ի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեի (Այսուհետ՝ ԿՈՄԻՏԵ) «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի շրջանակներում 2020 թվականի առաջին եռամսյակի պլանը կազմել է 2,068,300.0 հազ. դրամ, որը ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշմամբ ճշգրտման չի ենթարկվել: Առաջին եռամսյակի ֆինանսավորումը կազմում է 1,300,536.0 հազ. դրամ է, որը կազմում է եռամսյակային պլանի 63 տոկոսը: Ֆինանսավորման ցածր տոկոսը պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոմիտեի ֆինանսավորումը հատկացվել է հիմք ընդունելով կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը, որոնց թիվը նախատեսվածի համեմատ զգալի պակաս է եղել: Վերջինս պայմանավորված է հանրապետությունում արտակարգ իրավիճակի հետ կապված՝ գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի քանակով:

Էականության ընդհանուր շեմի հաշվարկման համար կիրառելի հիմք է ընտրվել 2,165,691,2 հազ. դրամը, կիրառելի տոկոսադրույք է սահմանվել 3%-ը, էականության ընդհանուր շեմի հաշվարկված գումարը կազմել է 64,971,0 հազ. դրամ: Էականության հատուկ շեմը հաշվարկվել է էականության ընդհանուր շեմի 75%-ը, որը կազմել է 48,728.0 հազ. դրամ: Խեղաթյուրումների նվազագույն շեմը հաշվարկվել է էականության ընդհանուր շեմի 3%-ը, որը կազմել է՝ 1,949.0 հազ. դրամ:

Ընտրվել է թվով 1 էական նշանակալի հաշիվ (1162-11002) «Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» ((463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» (462100) «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին» և (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածներով), որոնց մասով 2020 թ.-ի առաջին եռամսյակի համար պլանով և ճշտված պլանով նախատեսվել է՝ նախատեսվել է 2,031,144,6 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,268,104,7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 1,253,614.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 1.472.721,6 հազ. դրամ (տես՝ Հավելված 1):

II. ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԿՈՄԻՏԵ-ի գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման վերաբերյալ

ԿՈՄԻՏԵՆ չի օգտագործվել գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված շուրջ 9,5 մլն դրամը՝ պայմանավորված համավարակով:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ ԿՈՄԻՏԵՆ չի օգտագործել գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված 9 497,4 հազար դրամը՝ պայմանավորված համաճարակով: Տրամադրված ընդհանուր միջոցներից 274.3 մլն դրամն ուղղվել է գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններին՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 59.6%-ը, 159.6 մլն դրամ (նախատեսվածի 73.5% ը)՝ ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության, 119.4 մլն դրամ (նախատեսվածի 84%-ը)՝ բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացման, 124.5 մլն դրամ (նախատեսվածի 73.9%-ը)՝ գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների և 43.5 մլն դրամ (նախատեսվածի 78.3%-ը)՝ արագացուցչային տեխնոլոգիաների զարգացման միջոցառումներին: Ծրագրում ընդգրկված միջոցառումներից չորսի գծով նախատեսված 89 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեն կազմում է 18 969,4 (տասնութ միլիոն ինը հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր դրամ) հազար դրամ, որից չի օգտագործվել նախատեսվածի կեսը՝ ընդամենը 9 497,4 (ինը միլիոն չորս հարյուր ինսունյոթ հազար չորս հարյուր դրամ) հազար դրամը: Այս միջոցառման գծով իրականացվող թերի ֆինանսավորման մասով պետք է նշել, որ ինչպես այս, այնպես էլ ՀՀ ԳԱԱ կողմից իրականացվող բոլոր այլ միջոցառումների դեպքում ֆինանսավորումն իրականացվում է ուղղակի ՀՀ ԳԱԱ և իր ենթակա

կազմակերպությունների կողմից գանձապետական համակարգի միջոցով, և ԿՈՄԻՏԵՆ ֆինանսավորման գործում որևէ դերակատարում չունի:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում, քանի որ ֆինանսավորումը իրականացվում է պայմանագրերի հիման վրա, որի պատասխանատու կողմը հանդիսանում է Կոմիտեն: Իսկ թերակատարումը բացառելու նպատակով Կոմիտեն պետք է վաղաժամ՝ նախքան պայմանագրերի կնքումը իրականացված պլանավորման աշխատանքներում, կամ կնքվող պայմանագրերի առաջին եռամսյակի կատարման գործընթացում ձեռնարկեր այնպիսի քայլեր, որոնք կբացառեին թերակատարումները: Ինչ վերաբերվում է ֆինանսավորման նկատմամբ ԿՈՄԻՏԵ-ի դերակատարությանը, ապա Կոմիտեի դերակատարուումը կայանում է նրանում, որ որպես պայմանագրային կողմ պարտավոր է հետևել պայմանագրի կատարման ընթացքին և դրա համապատասխանությանը նախատեսված ժամանակացույցին, որից շեղումներն էլ հենց հիմք են հանդիսացել թերակատարման համար:

2. ԿՈՄԻՏԵԻ անտենային էտալոնների պահպանման և զարգացման վերաբերյալ

ԿՈՄԻՏԵԻ անտենային էտալոնների պահպանման և զարգացման համար նախատեսված 9 մլն դրամի վճարումն իրականացվել է երկրորդ եռամսյակում:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ ԿՈՄԻՏԵ-ի կողմից չի օգտագործվել անտենային էտալոնների պահպանման և զարգացման համար նախատեսված 9 մլն դրամը, որը պայմանավորված է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունների միաձուլման արդյունքում ստեղծված «Ստանդարտացման և չափագիտության մարմին» փակ բաժնետիրական ընկերության պայմանագրի կնքման գործընթացով, որի արդյունքում վճարումն իրականացվել է 2-րդ եռամսյակում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք *Անտենային էտալոնների պահպանման և զարգացման համար նախատեսված 9 մլն դրամին վերաբերյալ հայտնում եմ, որ այդ տողով նշված ֆինանսավորումը ԿՈՄԻՏԵՆ չի իրականացնում, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի 1919-Ն որոշման N 4 հավելվածի 1162 ծրագրի՝ 11010 միջոցառմամբ նախատեսված այդ միջոցները տնօրինվում են ըստ իրենց գերատեսչական պատկանելության, տվյալ դեպքում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:*

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն Հաշվեքննության օբյեկտի առարկությունը մասամբ ընդունելի է, քանի որ թեև ֆինանսավորման գերատեսչական պատասխանատուն ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն է, սակայն վերջինիս կանոնադրական գործունեությունը չի առնչվում գիտական հետազոտությունների և գիտական ենթակառուցվածքների զարգացման և պահպանման հետ, ինչը առնվազն հետագա քննարկումների հարց պետք է դառնա, իսկ Հաշվեքննիչ պալատի դիտարկման համար հիմք է հանդիսացել ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակված ՀՀ Պետական բյուջեի առաջին եռամսյակի կատարման վերլուծությունը՝ / http://www.minfin.am/website/images/files/_2020_I%20.doc, էջ 86/ որտեղ նշված ծրագրի թերակատարումը նշված է ընդհանուր ծրագրի մեջ առանց պատասխանատու գերատեսչություն մատնանշելու:

2. ԿՈՄԻՏԵ-ի ծախսերի ընդհանուր ծավալի վերաբերյալ

ԿՈՄԻՏԵ-ի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 10.1%-ով:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ ԿՈՄԻՏԵՆ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 10.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գիտական ենթակառուցվածքի արդիականացման և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության գծով ծախսերի նվազմամբ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք *Նախորդ տարվա համեմատությամբ արձանագրված ծախսերի ընդհանուր ծավալի շուրջ 10 տոկոսով նվազումը պայմանավորված է 2020 թվականին, հատկապես՝ մարտ ամսվա ընթացքում ստեղծված համավարակային իրավիճակի և հայտարարված արտակարգ դրության հետ, որի արդյունքում էականորեն սահմանափակվել է մարդկանց տեղաշարժը, և հնարավոր բոլոր դեպքերում աշխատանքներն իրականացվել են հեռավար կարգով, ինչն էլ իր հերթին նպաստել է որոշ ենթածրագրերի գծով աշխատանքների ոչ լրիվ ծավալով կատարմանը:*

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն Հաշվեքննության օբյեկտի բացատրությունը վերաբերում է 2020թ. մարտի 17-ից արտակարգ դրության ռեժիմով պայմանավորված սահմանափակումներին, ինչը կազմում է 1-ին եռամսյակի ժամանակահատվածի վերջին 1/6 մասը:

4. ԿՈՄԻՏԵ-ի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ

ԿՈՄԻՏԵԻ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը պայմանավորված են նախորդ տարի հաստատված, սակայն դեռևս ավարտին չհասած դրամաշնորհային պայմանագրերով:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, ԿՈՄԻՏԵԻ դեբիտորական պարտքերը տարեսկզբին կազմել են 850,819.2 հազար դրամ, որն ամբողջապես գոյացել է նախորդ տարվա բյուջեից: Առաջին եռամսյակի ավարտին ԿՈՄԻՏԵԻ ընդհանուր դեբիտորական պարտքերը կազմել են 591,397.6 հազար դրամ: Դեբիտորական պարտքերը հիմնականում ձևավորվել են «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածներով, որը պայմանավորված է նախորդ տարի հաստատված, սակայն դեռևս ավարտին չհասած դրամաշնորհային պայմանագրերով, ինչը առաջին եռամսյակի ընթացքում նվազել է 259,421.58 հազ. դրամով: Կրեդիտորական պարտքեր տարեսկզբի դրությամբ ԿՈՄԻՏԵն չի ունեցել, իսկ 2020 թ. առաջին եռամսյակի ավարտին՝ 31,03,2020թ. դրությամբ կազմել է 133,958.1 հազար դրամ: 2020թ. առաջին եռամսյակի արդյունքներով կրեդիտորական պարտքեր ձևավորվել են հիմնականում «Ընթացիկ դրամաշնորհներ

պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածներով ձևավորված այն դրամաշնորհային պայմանագրերից, որոնց մասով ներկայացվել է առաջին եռամսյակի կատարողականները, սակայն փաստացի վճարումը դեռևս չի կատարվել: (տես՝ Հավելված 2):

Հաշվեքննության օբյեկտի արձագանք Դեբիտորական և կրեդիտորական պարտքերիխ գծով *ԿՈՄԻՏԵԻ* կողմից իրականացվող ֆինանսավորման արդյունքում կազմակերպությունները, որպես ինքնուրույն տնտեսվարողներ սուբյեկտներ, իրենք են կատարում իրենց դրամարկղային և փաստացի ծախսերը, ինչի արդյունքում էլ գոյանում են դեբիտորական կամ կրեդիտորական պարտավորություններ, որոնք էլ արտացոլվում են ԿՈՄԻՏԵԻ ներկայացվող եռամսյակային և տարեկան հաշվետություններում: ԿՈՄԻՏԵՆ իր հերթին, ամփոփելով դեբիտորական և կրեդուտորական պարտքերի տվյալները՝ ներկայացնում է ֆինանսների նախարարություն, արդյունքում՝ *ԿՈՄԻՏԵՆ* եռամսյակային կտրվածքով չի կարող իրականացնել կազմակերպությունների կողմից առաջացրած դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերահսկում:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում, քանի որ հաշվեքննության մեջ ներկայացվել է Կոմիտեի ունեցած դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, և դրանք որևէ կապ չունեն կազմակերպությունների պարտքերի հետ:

5. ԿՈՄԻՏԵ-ի կողմից կնքված դրամաշնորհային պայմանագրերի վերաբերյալ

ԿՈՄԻՏԵԻ կողմից կնքված դրամաշնորհային պայմանագրերի թերակատարումը պայմանավորված է մի շարք պայմանագրերի առաջին եռամսյակի ցածր կատարողականով

2020թ. առաջին եռամսյակի արդյունքներով «Գիտական-գործնական ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի շրջանակներում կնքվել են դրամաշնորհային 30 պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 1,111,364,221.0 հազար դրամ: Կնքված պայմանագրերի համաձայն առաջին եռամսյակի համար նախատեսված գումարը կազմել է 217,584,221.00 հազար

դրամ, իսկ դրամաշնորհային պայմանագրերի փաստացի կատարողականի հիման վրա վճարված գումարը կազմել է 203,063,453.0 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 93 տոկոս: Թերակատարումը պայմանավորված է եղել մի շարք պայմանագրերի առաջին եռամսյակի ցածր կատարողականով: Մասնավորապես 02,03,2020թ-ին «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի հետ կնքված պայմանագրի մասով կատարողականը կազմել է 48,3 տոկոս, 30,01,2020թ. «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրի կատարողականը կազմել է 38,6 տոկոս և այլն (Հավելված 3): Վերոնշյալ թերակատարումները պայմանավորված են այն հանգամանով, որ կոմիտեն կազմակերպությանը ֆինանսավորում է վերջինիս կողմից ներկայացրած հայտի հիման վրա, հետևաբար թերի ֆինանսավորումը պայմանավորված է 2020թ. առաջին եռամսյակի համար կազմակերպության կողմից ներկայացրած հայտի չափաքանակով:

6. ԿՈՄԻՏԵ-ի գնումների գործընթացի վերաբերյալ

ԿՈՄԻՏԵԻ կարիքների համար 2020թ. առաջին եռամսյակի ընթացքում մրցութային ընթացակարգեր չեն կազմակերպվել, իսկ հաշվետու տարվա առաջին եռամսյակում կնքվել է 11 պայմանագիր՝ 4,408,1 հազ. դրամ ընդհանուր արժեքով: ԿՈՄԻՏԵի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշման հավելված 3-ի 4-րդ և 9-րդ կետերի պահանջները, համաձայն որի մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը պատվիրատուի ղեկավարը հաստատում է գնումների պլանը և երկու աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով հրապարակում է «www.gnumner.am» հասցեով ինտերնետային կայքում, սակայն պատվիրատուի ղեկավարի կողմից 2020թ. գնումների պլանը սահմանված ժամկետներում չի հաստատվել, իսկ տեղեկագրում հրապարակվել է

ԿՈՄԻՏԵԻ գնումների գործընթացում մրցութային ընթացակարգեր չեն կազմակերպվել, պայմանագրերի հանձնման-ընդունման գործառույթը չի կազմակերպվել էլեկտրոնային համակարգի միջոցով, և էլեկտրոնային գնումների համակարգում բացակայել են պատասխանատու ստորաբաժանման կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված եզրակացությունները և հանձնման-ընդունման արձանագրությունները:

չհաստատված փաստաթուղթ: Նույն խնդիրն է արձանագրվել նաև հետագայում հրապարակված գնումների պլանում կատարված փոփոխություններում:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2020թ. առաջին եռամսյակում բոլոր պայմանագրերի հանձնման-ընդունման գործընթացները չեն կազմակերպվել էլեկտրոնային համակարգի միջոցով, և էլեկտրոնային գնումների համակարգում բացակայել են պատասխանատու ստորաբաժանման կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված եզրակացությունները և հանձնման-ընդունման արձանագրությունները, իսկ նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման 110-րդ կետի պահանջները՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք *Գնումների գործընթացի վերաբերյալ հայտնում ենք, որ ԿՈՄԻՏԵԻ կողմից 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կնքվել է 21 պայմանագիր 6,730,6 (վեց միլիոն յոթ հարյուր երեսուն հազար վեց հարյուր դրամ) հազար դրամ ընդհանուր ծավալով (արձանագրությամբ նշվել էր 11 պայմանագիր 4 408 118,0 (չորս միլիարդ չորս հարյուր ութ միլիոն հարյուր տասնութ հազար դրամ) հազար դրամ):*

ԿՈՄԻՏԵՆ 2020 թվականի գնումների պլանը սույն թվականի հունվարի 16-ին ժամը 15-14 տեղադրվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 21-րդ կետի (մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը պատվիրատուի ղեկավարը հաստատում է գնումների պլանը և յոթ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Վերադասի կողմից հաստատված չլինելու՝ կնիքի և ստորագրության բացակայության պատճառը հետևյալն է. առաջնորդվել ենք 2017 թվականի ապրիլի 13-ի ՀՀ կառավարության N 390-Ն «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» որոշմամբ սահմանված հավելված 1-ի ձևաչափով, որտեղ չկան

«ստորագրություն» կամ «Կ.Տ» նշումները, ուսպի և այդ նշումների բացակայության պատճառով կնիք և ստորագրություն չի դրվել:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում, քանի որ գնումների պլանը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է ստորագրությամբ և կնիքով, կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը հրապարակված պլանի վրա բացակայել է:

III ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկել ԿՈՄԻՏԵ-ին՝

1. Ուշադրություն հրավիրել գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման նախատեսված միջոցների ճշգրիտ, նպատակային և ամբողջական օգտագործման գործընթացների վրա:

2. Քայլեր ձեռնարկել գիտական ենթակառուցվածքների զարգացման և պահպանման ծրագրի բոլոր կատարողների նկատմամբ Կոմիտեի կողմից որևէ հսկողական կամ կազմակերպչական գործառույթ նախատեսելու ուղղությամբ, հակառակ դեպքում տվյալ ծրագրով տրամադրվող ֆինանսավորումը կարող է դարձնել ինքնանպատակ:

3. Ձեռնարկել այնպիսի միջոցներ և հսկողական համակարգեր, որոնցով կվերահսկվեն կնքված պայմանագրերով սահմանված կատարողականների և ներկայացվող հայտերի չափաքանակները՝ թերֆինանսավորման պատճառների բացահայտման համար:

4. Ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնցով կբացառվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (16.12.2016թ.) և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման պայմանների և պահանջների չկատարումը:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը սպանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացնել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝ Ա. Բախչագուլյան

IV ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԿՈՄԻՏԵ-ի 2020 թվականի առաջին եռամսյակի ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազար դրամ)

ԾԲ ծրագիր Միջոցառում Բաժին Խումբ Դաս Ծրագիր Հոդված	Հաշվետու ժամանակա-հատվածի պլան	Հաշվետու ժամանակա-հատվածի ճշտված պլան	Ֆինանսա-վորում	Դրամարկ-ղային ծախս	Փաստացի ծախս
(462100) «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին»	603,174	603,174	132,703	132,703	132,703
(463700) Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին»	898,603	898,603	885,429	885,429	874,296
(463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»	529,368	529,368	249,973	235,482	465,722
Ընդամենը՝	**2,031,144,6**	**2,031,144,6**	**1,268,104,7**	**1,253,614.1**	**1.472.721,6**

ՀԱՎԵԼՎԱԾ 2

2020 թվականի առաջին եռամսյակի ԿՈՄԻՏԵ - ի դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

(հազար դրամ)

Պատասխանատու ԾԲ, ծրագիր, Միջոցառում, Ենթածրագիր, Կատարող, Հոդված	Դեբիտորական պարտքեր				Կրեդիտորական պարտքեր			
	Ընդամենը տարեսկիզբ	Այդ թվում՝ պետական բյուջեից	Ընդամենը եռամսյակի վերջ	Այդ թվում՝ պետական բյուջեից	Ընդամենը տարեսկիզբ	Այդ թվում՝ պետական բյուջեից	Ընդամենը եռամսյակի վերջ	Այդ թվում՝ պետական բյուջեից
(1111) «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր»	1,165,5	1,165,5	1,653.5	1,653.5	0,0	0,0	153,3	153,3
(1111-12003) «Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ» (09040202) ՊԵՏԳԻՏԿՈՄ ***(472700)*** ***«Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից»***	195,0	195,0	195,0	195,0	0,0	0,0	100,0	100,0
(1111-12006) «Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում» (09040201) ՊԵՏԳԻՏԿՈՄ ***(472900)*** ***«Այլ նպաստներ բյուջեից»***	970,5	970,5	1,458.5	1,458.5	0,0	0,0	53,3	53,3
(1162) «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»	568,759.7	568,759.7	441,104.0	441,104.0	0.0	0.0	91,825.5	91,825.5
(1162-11001) «Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ» (09080101) ՊԵՏԳԻՏԿՈՄ ***(411100)*** ***«Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»***	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	20205.2	20205.2

(1162-11002) «Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» (01040102) ՊԵՏԳԻՏԿՈՄ	568,759.7	568,759.7	441,104.0	441,104.0	0.0	0.0	91,825.5	91,825.5
(463500) « Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին»	373.7	373.7	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
(463500) « Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին»	22,871.9	22,871.9	37,083.6	37,083.6	0.0	0.0	3,079.2	3,079.2
(463900) « Այլ ընթացիկ դրամաշնորհներ»	545,514.1	545,514.1	404,020.4	404,020.4	0.0	0.0	88,746.3	88,746.3

ՀԱՎԵԼՎԱԾ 3

2020 թվականի առաջին եռամսյակի ԿՈՄԻՏԵի կողմից կնքված պայմանագրեր

Հաշվի անվանումը՝ ***(01040102) «Գիտական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում»***

(ՀՀ դրամ)

Թիվ	*Պայմանագրի*			**Ստացողի անվանումը**	**Պայմանա-գրի գումարը**	**Վճարված գումար**	**Պայմա-նագրի մնացորդ**
	Հիմնական համարը	**Սկիզբ**	**Ավարտ**				
1	15.10.2020	30.01.2020	25.12.2020	*«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»* հիմնադրամ	121,165,700.0	18,383,960.0	102,781,740.0
2	07.10.2020	03.02.1920	25.12.1920	«Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» հիմնադրամ	126,691,900.0	25,338,200.0	101,353,700.0
3	04.10.2020	03.02.1920	25.12.1920	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	72,899,600.0	11,500,000.0	61,399,600.0
4	3-2/i	30.01.1920	25.12.1920	«Պատմամշակութային ժառանգություն գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ	47,112,400.0	9,422,500.0	37,689,900.0
5		30.01.1920	25.12.1920	Հայագիտության հիմնադրամ	58,853,000.0	9,213,600.0	49,639,400.0
6	8-9/i	31.01.1920	25.12.1920	«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ	42,059,100.0	8,393,100.0	33,666,000.0
7	3-4/i	30.01.1920	25.12.1920	«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ	72,107,800.0	6,959,790.0	65,148,010.0
8	10-5/i	03.02.1920	25.12.1920	«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ	37,071,500.0	6,237,100.0	30,834,400.0
9	6-18/i	30.01.1920	25.12.1920	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	33,405,100.0	6,120,600.0	27,284,500.0

10	10-11/ի	30.01.1920	25.12.1920	«Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ	28,830,900.0	5,766,100.0	23,064,800.0
11	8-10/ի	30.01.1920	25.12.1920	«Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն»ՊՈԱԿ	29,427,300.0	5,440,000.0	23,987,300.0
12	1-8/ի	30.01.1920	25.12.1920	Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ ՊՈԱԿ	22,159,500.0	4,431,900.0	17,727,600.0
13	10-2/ի	30.01.1920	25.12.1920	«Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարան» պետական ուսումնական հաստատություն	22,216,200.0	3,738,000.0	18,478,200.0
14	8-7/ի	31.01.1920	25.12.1920	«Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ	17,886,000.0	3,577,200.0	14,308,800.0
15		30.01.1920	25.12.1920	ԻԿՐԱՆԵՏ	17,762,900.0	3,500,000.0	14,262,900.0
16	12-2/ի	31.01.1920	25.12.1920	«Սրտաբանության գիտահետազոտական ինստ իտուտ» ՓԲԸ	17,318,700.0	3,258,624.0	14,060,076.0
17	6-7/ի	30.01.1920	25.12.1920	«Ռ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ	15,210,600.0	3,042,000.0	12,168,600.0
18	10-6/ի	30.01.1920	25.12.1920	«Երևանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	36,798,100.0	2,837,559.0	33,960,541.0
19	11-41/ի	30.01.1920	25.12.1920	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	2,476,220	2,476,219.0	1.0
20	N 2	28.02.1920	25.12.1920	Լևոն Մարդոյան	2,000,000.0	2,000,000.0	0.0

21	N-ՀՉ-01-20	10.02.1920	25.12.1920	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	10,000,000.0	2,000,000.0	8,000,000.0
22	ԱՀ-01/20/Մջ	05.07.2019	25.12.1920	«Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	9,762,400.0	1,952,400.0	7,810,000.0
24	6-17/i	30.01.1920	25.12.1920	«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ	11,402,900.0	1,783,900.0	9,619,000.0
25	6-2/i	30.01.1920	25.12.1920	«Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվ առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	1,680,000.0	1,680,000.0	0.0
26	ՀՈ18-01	30.01.1920	25.12.1920	«Էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	9,316,400.0	1,474,000.0	7,842,400.0
27	6-11/i	30.01.1920	25.12.1920	ԱՆ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	4,800,000,0	1,371,800,0	3,428,200
28	ՀՈ18-15	30.01.1920	25.12.1920	«Ա. Ի. Ալիխանյանի անվ. ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամ	1,400,000.0	1,400,000.0	0.0
29	Հ/Բ-1/19-20-21	30.01.1920	25.12.1920	«Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	5,400,000.0	1,300,000.0	4,100,000.0
30	N 1	28.02.1920	25.12.1920	Հայոցյան Սարգիս	1,298,701.0	1,298,701.0	0.0
31	ՀՈ18-13	30.01.1920	25.12.1920	«Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	1,260,000.0	1,260,000.0	0.0